# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2022թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2022/190**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.04.2022թ. թիվ 26/26-1/6866-2022 գրությամբ «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 13.04.2022թ. թիվ Ե/40/822-22 գրության հիման վրա, 20.04.2022թ. թիվ 26/26-1/6866-2022 գրությամբ նախաձեռնել է «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/190 ընթացակարգի շրջանակներում. 30.05.2022թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) 13.04.2022թ. թիվ Ε/40/822-22.գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար գրենական պիտույքների, գրասենյակային նյութերի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-66/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման, հայտերի գնահատման նիստում «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն թիվ 1 և 6-10 չափաբաժիններով ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկվել է կնքել պայմանագիր:

Ընթացակարգի անգործության ժամկետում «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ս.թ. ապրիլի 11-ին Պատվիրատուի ղեկավարին ուղարկված թիվ 001 գրությամբ հրաժարվել է թիվ 10-րդ չափաբաժնով (թաղանթ լամինացիայի) ընթացակարգի հետագա մասնակցությունից:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա պարբերության և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներով՝ Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/190 ընթացակարգի շրջանակներում 30.05.2022թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**<u>4. ՍՑ-ՆԳ-2022/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-66/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու

նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 1-ին և 6-10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ս.թ. ապրիլի 11-ին «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է թիվ 001 գրությունը, համաձայն որի Ընկերությունը հայտնել է, որ 10-րդ չափաբաժնում (թաղանթ լամինացիայի) ներառված գնման առարկայի գինը առաջացած տեխնիկական վրիպակի պատճառով շատ ցածր է մուտքագրվել էլեկտրոնային աճուրդի համակարգ, որի արդյունքում «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն դարձել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հաշվի առնելով վերոգրյալը մասնակիցը տեղեկացնում է, որ չի կարող համակարգ մուտքագրված գնով մատակարարել նշված գնման առարկան, ուստի հրաժարվում է թիվ 10-րդ չափաբաժնով ընթացակարգի հետագա մասնակցությունից:

4. «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 06.04.2022թ. թիվ 001 գրությամբ հայտնել է հետևյալը.

«(...) Մեր կողմից առաջարկվող թիվ 10 չափաբաժնում ներառված գնման առարկայի գինը առաջացած տեխնիկական վրիպակի պատճառով շատ ցածր է մուտքագրվել էլեկտրոնային աճուրդի համակարգ, որի պատճառով մեր ընկերությունը դարձել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հաշվի առնելով նշված հանգամանքը տեղեկացնում եմ, որ մեր ընկերությունը չի կարող համակարգ մուտքագրված գնով մատակարարել նշված գնման առարկան, ուստի խնդրում եմ կնքել պայմանագիրը առանց 10-րդ չափաբաժնի»:

**<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2022թ. թիվ 26/26-1/6866-2022

գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 13.04.2022թ. թիվ Ե/40/822-22 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

***<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>***,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-66/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 1-ին և 6-10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ս.թ. ապրիլի 11-ին «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է թիվ 001 գրությունը, համաձայն որի Ընկերությունը հայտնել է, որ 10-րդ չափաբաժնում (թաղանթ լամինացիայի) ներառված գնման առարկայի գինը առաջացած տեխնիկական վրիպակի պատճառով շատ ցածր է մուտքագրվել էլեկտրոնային աճուրդի համակարգ, որի արդյունքում «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն դարձել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հաշվի առնելով վերոգրյալը մասնակիցը տեղեկացնում է, որ չի կարող համակարգ մուտքագրված գնով մատակարարել նշված գնման առարկան, ուստի հրաժարվում է թիվ 10-րդ չափաբաժնով ընթացակարգի հետագա մասնակցությունից:

«ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 06.04.2022թ. թիվ 001 գրությամբ հայտնել է հետևյալը.

«(...) Մեր կողմից առաջարկվող թիվ 10 չափաբաժնում ներառված գնման առարկայի գինը առաջացած տեխնիկական վրիպակի պատճառով շատ ցածր է մուտքագրվել էլեկտրոնային աճուրդի համակարգ, որի պատճառով մեր ընկերությունը դարձել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հաշվի առնելով նշված հանգամանքը տեղեկացնում եմ, որ մեր ընկերությունը չի կարող համակարգ մուտքագրված գնով մատակարարել նշված գնման առարկան, ուստի խնդրում եմ կնքել պայմանագիրը առանց 10-րդ չափաբաժնի»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ***<u>քանի որ գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն արդեն իսկ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին ուղղված 11.04.2022թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-66/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 10-րդ չափաբաժնի մասով հետագա մասնակցությունից, այսինքն՝ ըստ էության որպես</u>***

***<u>Ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից հրաժարվել է նշված չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.04.2022թ. թիվ 26/26-1/6866-2022 գրությամբ «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**